ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ V—VII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

Հայ ժողովրդի պատմական ճակատագրում որոշակի դեր է կատարել նրա հայրենիքի աշխարհագրական դիրքը։ Դարեր շարունակ Հայաստանն իր ռազմաստրատեգիական առանձնահատուկ նշանակությամբ կռվախնձոր է եղել աշխարհակալության ձգտող հարևան ու հեռավոր հզոր պետությունների՝ աքեմենյան, պարթևական, սասանյան Պարսկաստանի, Սելևկյանների, Հռոմեական, ավելի ուշ՝ Բյուզանդական կայսրությունների, Արաբական խալիֆայության, հետագայում նաև այլ նվաճողների համար։ Նրա պատմական զարգացման ընթացքում եղել են մերթ վերելք, հզորացում, մերթ՝ քայքայում ու անկում։ Դրա հիմնական պատճառներից մեկը բուֆերային այն կացությունն էր, որի մեջ նա ընկել էր մ. թ. ա. I դարում։ Եթե Հռոմեական կայսրությունը իր դերիշխանությունն էր հաստատել Եփրատ ու Տիգրիս գետերի ափերին։ Գտնվելով երկու հզոր թշնամիների՝ Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև, Հայաստանը, հակառակ հայ ժողովրդի կենսական շահերի, հարկադրված էր մասնակից լինել անվերջ ու կատաղի այն պատերազմներին, որ պարբերաբար վերսկսում էին իրար դեմ հակամարտող պետությունները։ Նրա կողմնորոշումը մրցակցող պետությունների համար վճռական նշանակություն է ունեցել և հաճախ որոշիչ դեր է կատարել նրանց միջև մղվող պատերազմների ելքի գործում, հետևաբար Հայաստանին տիրապետելը կամ նրա հետ քաղաքական մերձեցումը այդ պետությունների համար խիստ կարևոր է եղել։

Հ. Մանանդյանը նկատում է, որ Հայաստանի բուֆերային դրությունն էր գլխավոր պատճառը, որ նա որոշ ժամանակաշրջաններում անկարող էր իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը, և նրա քաղաքական վիճակը կարգավորել են շահագրգռված պետությունները[1]։ Հայաստանը իրրև Պարսկաստանի բարեկամ ու դաշնակից, անհանդուրժելի վտանգ էր Հռոմեական արևելյան նահանգների համար, իսկ իրրև դաշնակից Հռոմի՝ սպառնալիք Պարսկաստանի համար։ Որպես պարսկա-հռոմեական համառ ու արյունահեղ պատերազմների մարտադաշտ Հայաստանը պարբերաբար ավերվում ու կողոպտվում էր, բնակչությունը սրի էր մատնվում ու գերեվարվում։

Երկրի բուֆերային դրությունը միաժամանակ նպաստում էր ֆեոդալական պետություններին բնորոշ կենտրոնախույս ուժերի ակտիվացմանը և իշխող աշխարհիկ ու հոգևոր տերերի քաղաքական կողմնորոշման ավելի բացահայտ դրսևորմանը։ Այդ երևույթները կազմել են Հայաստանի ու հայ ժողովրդի հին և միջին դարերի քաղաքական պատմության էական կողմերից մեկը և իրենց լայն արտացոլումն են գտել վաղ ֆեոդալիզմի դարաշրջանից մեզ հասած պատմական երկերում։

Ներկա հոդվածում փորձ է արվում շատ համառոտ ու ընդհանուր գծերով ցույց տալ քաղաքական կողմնորոշման արտացոլումը V—VII դդ. հայ պատմագրության մեջ։

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում իշխող վերնախավերի քաղաքական կողմնորոշումը թելադրվել է առաջին հերթին պատմական կոնկրետ պայմաններով, միջազգային կյանքում տեղի ունեցող խոշոր իրադարձություններով և երկրորդ՝ երկրի ներսում տեղի ունեցող համակենտրոնացման ու

---

[1] Հ. Մանանդյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1977, էջ 602։

մասնատվածության հակամարտով, այլ խոսքով՝ կենտրոնաձիգ ու կենտրոնախույս ուժերի պայքարով։ Այդ բոլորը պայմանավորել են պետությունների արտաքին ու ներքին քաղաքականությունը և ամբողջ քաղաքական կյանքն ու ժողովուրդների պատմական առաջընթացը։

Եթե հաշվի առնենք Հայաստանի բուֆերային դրությունը և աշխարհակալության ձգտող պետությունների՝ նրա նկատմամբ վարած նվաճողական ու ձուլարարական քաղաքականությունը, ապա պարզ կլինի, թե քաղաքական կողմնորոշումը ինչպիսի բախտորոշ դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում և շատ հաճախ ավերիչ ու կործանարար հետևանքներ ունեցել։

Արտաշեսյան տիրապետության ժամանակներից Հայաստանում առաջացել էին քաղաքական կողմնորոշման երեք հակադիր հոսանքներ կամ ուղղություններ. 1) ինքնուրույն-ազգային, որը երկրի պաշտպանության գործում ապավինում էր իր ժողովրդին և իր սեփական ռազմական ուժերին, առանց օտար պետություններից ակնկալություններ ունենալու. կողմակերպիչներն են եղել երկրի գահակալները, որոնք և ղեկավարել են ժողովրդի պայքարը օտար նվաճողների դեմ, 2) արևելյան կամ պարսկական, 3) արևմտյան կամ հռոմեա-բյուզանդական։ Նրանց միջև հակամարտությունները հարատևել են դարեր շարունակ, կրելով մերթ քողարկված ու դավադրական, մերթ՝ բացահայտ արյունահեղ եղբայրասպան ու կործանարար բնույթ։ Նախարարների այն մասը, որի տիրույթները սահմանակից էին կամ մոտ Պարսկաստանին, հարել են պարսկական կողմնորոշմանը։ Մյուս մասը, որի տիրույթները սահմանակից կամ մոտ են եղել Հռոմեական, հետագայում Բյուզանդական կայսրությանը, ունեցել են հռոմեա-բյուզանդական կողմնորոշում։

III դարի 30-ական թվականներից, Պարսկաստանում Սասանյանների տարստության հաղթանակից հետո, Հայաստանում քաղաքական կողմնորոշման բնագավառում դրությունն արմատապես փոխվել է։ Եթե մինչ այդ հռոմեական ագրեսիային դիմակայելու համար հայերը ապավինել էին պարթևական Պարսկաստանին, ապա դրանից հետո Սասանյանները դարձել են հայ Արշակունիների ոխերիմ թշնամիները և ամեն կերպ ձգտել վերջ տալ հայ պետականությանը, տիրել Հայաստանին՝ այն դարձնելով պարսկական մարզ, իսկ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դառնալուց հետո վարել են ձուլարարական քաղաքականություն՝ բռնի ուժով տարածելով զրադաշտական կրոնը։ Այդ քաղաքականությունը նրանք վարել են նաև Վրաստանի ու Աղվանքի նկատմամբ։ Նոր պայմաններում Անդրկովկասի ժողովուրդները Սասանյանների ագրեսիային դիմակայելու համար հարկադրված են եղել դիմելու Բյուզանդական կայսրության օգնությանը։ Վերջինս, որ Պարսկաստանի դեմ պայքարում դարեր շարունակ ձգտել է նվաճել Անդրկովկասը, այն դարձնել պատվար թշնամու դեմ և, որ կարևոր է, իր շահերին ծառայեցնել Անդրկովկասի ժողովուրդների ռազմական ուժերը, օգտվելով դրանից՝ աշխատել է իրականացնել իր վաղեմի այդ ծրագիրը։

Բյուզանդական կայսրությունը, մինչև Հուստինիանոսը, պահպանել էր Հայաստանի բաժանման նախօրյակին կամովին իր կողմն անցած սահմանակից հինգ նախարարությունների (ըստ հույների՝ սատրապությունների) նախարարական կարգը, ինքնավարությունը, նախարարների իրավունքներն ու արտոնությունները։ Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը գրում է, թե կայսրությունը սատրապությունների ազատությունը, ինքնավարությունը չվերացրեց ոչ թե մեծահոգությունից ելնելով, այլ այն կոնկրետ պայմանների պատճառով, որ առաջացել էին Հայաստանին տիրելու համար հռոմեական և պարսկական ուժերի միջև տեղի ունեցող դարավոր մրցակցության հետևանքով։ Այդ պայքարում և նրա ելքի համար, ընդգծում է Ն. Ադոնցը, ոչ պակաս նշանակալի դեր ուներ Հայաստանի կողմնորոշումը, որը հարկադրված էր հակվելու մեկ կամ մյուս կողմին[2]։

---

[2] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Спб., 1908, с. 110.

V դարում, Սասանյանների հայահալած քաղաքականության պայմաններում, անհրաժեշտություն էր զգացվել ցույց տալ անցյալում հայ-պարթևական հարաբերությունների ու հայերի պարթևական կողմնորոշման դրական արդյունքները։ Պատմահայր Մովսես Խորենացին, մեղանչելով պատմության առջև, գրել է, որ իբր հայ Արշակունիների թագավորությունը ստեղծել են Պարթևները, որ Պարթև Արշակ (իրականում՝ Վաղարշ—Լ. Բ.) մեծ արքան է իր Վաղարշակ եղբորը (իրականում՝ Տրդատ—Լ. Բ.) թագավորեցրել Հայաստանում, որ Հայաստանի սահմանները որոշել է ոչ այլ ոք, քան «թագաւոր երկրի և ծովու», «հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս» «Արշակ Մեծ Պարսից և Պարթևաց արքան», որ նա իր թագավորության կեսը տվել է Վաղարշակին ու նրան ասել. «և այլ որչափ միտք քո և քաջութիւն հասանիցեն. դի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»[3]։

Քրիստոնեության մուտքով քաղաքական կողմնորոշումը շղարշվել է կրոնական-դավանաբանական քողով։ Հայերը, ընդունելով քրիստոնեությունը, նրա մեջ տեսել են Սասանյանների ձուլարարական քաղաքականությանը դիմակալելու և զոյատևելու ու ինքնությունը պահպանելու զոր զենք։ Հետագայում այդ նպատակին է ծառայել նաև հայ գրերի գյուտը և հայկական դպրության ստեղծումը։ Ի դեպ, նկատենք, որ դարագլուխ կազմող այդ երկու իրադարձությունները որոշ ժամանակ անց նպաստավոր հող են ստեղծել Հայաստանում արևմտյան, ավելի ճիշտ՝ հունական կողմնորոշման համար։ Նշելով այդ հանգամանքը, մենք առաջին հերթին նկատի ունենք կողմնորոշումը դեպի հունական գիտությունն ու մշակույթը և ոչ այնքան բյուզանդական պետական քաղաքականությունը։ Բացառված չէ, որ հայ պատմագիրները, որոնք հիմնականում ազգային կողմնորոշման քարոզիչներն են եղել, մասնավորապես հեթանոսության մեջ համառող ժողովուրդների դեմ պայքարում, որոշ հույսեր են կապել կայսրության հետ՝ որպես քրիստոնյա պետության, առաջնորդվելով այն սկզբունքով, որ եկեղեցին ու պետությունը երկվորյակներ են և կոչված են համագործակցելու այլակրոն հակառակորդների դեմ պայքարում։

Փավստոսը գրում է, թե Արշակ II-ը, իմանալով Վաղես կայսեր կողմից Ներսես կաթողիկոսին բանտարկելու մասին, խիստ վրդովվել է ու ասել. «Ինչպէ՞ս նա համարձակվեց արգելանքի ենթարկել այնպիսի մեծ և պատվավոր մարդու, որ մի աշխարհի և թագավորության գլխավորը, ուսուցիչն ու առաջնորդն էր»[5]։

Հայ հոգևոր ու աշխարհիկ իշխողները նույնպես իրենց դավանանքի, ազգային եկեղեցու պաշտպանության մեջ են տեսել երկրի և ժողովրդի ինքնուրույնության պահպանման հիմնական երաշխիքը։ Նրանց պատկերացմամբ և. եկեղեցին իր մեջ մարմնավորել է նաև պետականության դաղափարը։ Պատահական չէ, որ Փավստոսը գրում է, թե կայսրության արքունիքում գիտեին, որ «դրանց աշխարհում (Հայաստանում—Լ. Բ.) թագավորն ու դա (Ներսես կաթողիկոսը—Լ. Բ.) մի հաշվի են»[6]։

Քաղաքական կողմնորոշումն իր արտացոլումն է ստացել նշված դարերում նաև հայ եկեղեցու կյանքում։ Այդ կապակցությամբ Ն. Ադոնցը նկատում է, որ կաթողիկոսական աթոռի վրա Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսի տոհմերի հաջորդականությունը կապված էր գահակալող Արշակունի թագավորների քաղաքական կողմնորոշման հետ։ Հռոմեական կայսրության ազդեցության ուժեղացման ժամանակաշրջանում այն գտնվում էր Լուսավորչի տոհմի ձեռքում, իսկ Պարսկաստանի ազդեցության ուժեղացման պայմաններում անցնում էր Աղ-

---

3 Մովսես Խորենացի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1913, էջ 31։

4 Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ Ստ. Մալխասյանցի. Երևան, 1947, էջ 152։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

բիանոսի տոհմի ներկայացուցիչներին։ Լուսավորչի տոհմը կայսրության վարած քաղաքականության ջատագովն էր, իսկ Աղբիանոսինը՝ ավելի շատ հակված էր Պարսկաստանին։ Տիրան թագավորի ժամանակ, որը պարսիկների օգնությամբ էր գահակալել, կաթողիկոսական աթոռին տիրել են Աղբիանոսի տոհմի ներկայացուցիչները։ Տիրանին հաջորդած Արշակի գահակալության հենց սկզբում, որը հռոմեացիների օգնությամբ էր ստանձնել գահը, կաթողիկոսական աթոռը անցնում է Լուսավորչի թոռան՝ Ներսեսին, սակայն երբ կայսրության և Արշակի միջև հարաբերությունները վատանում են, և նա դաշինք է կնքում Շապուհի հետ, Ներսեսը հեռացվում է աթոռից և այն նորից անցնում է Աղբիանոսի ժառանգներից Զունակ եպիսկոպոսին։ Արշակին հաջորդած Պապ թագավորը, որը գահին տիրել էր նույնպես կայսրության զենքի օգնությամբ, Ներսեսին վերականգնում է իր իրավունքներում։ Պապի բարեկամությունը կայսրության հետ երկար չի տևում, նա շուտով կողմնորոշվում է դեպի Պարսկաստան, իսկ Ներսեսը, որ արևմտյան կողմնորոշման պարագլուխն էր, ամեն ջանք գործադրում է՝ ետ պահելու նրան այդ քայլից, որի համար և սպանվում է[7]։

* * *

Թե ինչ վճռական դեր է կատարել Հայաստանը պարսկա-հռոմեական հակամարտություններում՝ որոշակի գրել է Փավստոս Բուզանդը։ Պարսից արքունիքում հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը, շղթայակապ վիճակում, Շապուհ II-ին ասում է. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա։ Բայց եթե ես դեռ Վասակ էի՝ ես հսկա էի, մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը՝ մյուս լեռան, երբ աջ ոտքիս վրա էի հենվում՝ աջ կողմի լեռը գետինն էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում»։ Շապուհի հարցին, թե դրանք ինչ լեռներ են, Վասակը պատասխանում է. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Բյուզանդիայի թագավորը»[8]։

Պատմագիրը վկայում է, որ դրանից առաջ նույն Շապուհը հայոց Արշակ II թագավորին գրել է. «Բարեհաճիր, եղբայր, այս պատերազմում (Հռոմի դեմ —Լ. Բ.) ինձ օգնել. քո գնդովդ եկ ինձ օգնության, եթե դու մեր կողմը լինես՝ գիտեմ որ հաղթությունը մերը կլինի»[9]։

Վալերիանոս կայսեր կենսագիր Տրեբելլիոս Պոլլիոնոսը Շապուհ I-ի կողմից կայսեր գերի վերցնելու կապակցությամբ վկայում է, որ հայոց Արտավազդ թագավորը (Հ. Մանանդյանը հավանական է համարում, որ այդ Արտավազդը հաջորդել է Տրդատ II-ին և եղել է Սասանյանների կողմնակից[10]) Շապուհ I-ին խորհուրդ է տվել կայսերը ազատել գերությունից, պատճառաբանելով, թե «դու վերցրիր գերի միայն մի ծերունու, իսկ քո դեմ խիստ թշնամացրիր երկրագնդի բոլոր ժողովուրդներին. գուցե նաև մեր դեմ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր, մենք, որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, եթե դուք իրար հետ կռվում եք»[11]։ Խորենացին շատ լավ է գիտակցել գահակալող Արշակունիների անելանելի վիճակը երկու աշխարհակալ պետությունների հակամարտությունների մեջ։ Վաղես կայսերը հղած թղթում Արշակը գրել է. «Թող ինքնակալդ այնպես չմտածի, թե մենք ձեզ ատելուց սատամբակեցինք կամ մեզ հզոր համարելով ասպատակող գունդ ուղարկեցինք Հունաց երկիրը, բայց գիտենալով, որ մեծ խռովություն է ծագել ձեր մեջ և որ ոչ

---

7 Н. Адонц. Указ. соч., с. 352—353.

8 Բուզանդ, էջ 218։

9 Նույն տեղում, էջ 187։

10 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, Երևան, 1978, էջ 97։

11 Նույն տեղում, էջ 98։

ոք մեզ չի փրկի Շապուհի ձեռքից, երկյուղից նրան օգնեցինք մի փոքր գնդով. բայց ես ինքս, Արշակս, նրա հետ չեկա, հավատարիմ մնալով ձեզ. որի պատճառով նա ավերեց մեր աշխարհը, մինչև անգամ մեր հայրերի գերեզմանները փորեց, ոսկորները հանեց։ Արդ՝ այս իրողություններին հավատալով՝ հաստատ պահեցեք ձեր նախկին սերը դեպի մեզ, և մենք հավատարմությամբ ձեզ կծառայենք»[12]։

Հետագայում, արաբա-բյուզանդական հակամարտություններում էլ Հայաստանը միշտ ծանր դրության մեջ է ընկել։ Ճիշտ է, սկզբնական շրջանում արաբ նվաճողներն էլ, հաշվի առնելով Հայաստանի ռազմաստրատեգիական խիստ կարևոր նշանակությունը և զորական ուժերը, աշխատել են իրենց կողմը գրավել հայկական նախարարություններին. վերջիններս էլ, համոզվելով, որ կայսրությունը ի վիճակի չէ իրենց օգնելու, հարկադրված հպատակվել են արաբներին, նրանց հետ կնքելով իրենց համար բավական նպաստավոր պայմանագիր։

Խոսելով խալիֆայության դեմ բյուզանդական կայսր Բարսեղ I-ի մղած հաղթական պատերազմների մասին, ֆրանսիացի գիտնական Ժ. Լորանը գրում է, որ այդ ժամանակ նախարարական Հայաստանի կողմնորոշումը ստացել է խիստ կարևոր նշանակություն, որ կայսեր հաղթությունը կլիներ լիակատար, եթե հայերը ևս հարձակվեին արաբների աջ թևի վրա և օգնեին մտնելու խալիֆայության կենտրոնական երկրները։ Նա միաժամանակ նկատում է, որ Հայաստանի ստրատեգիական սպառնական այդ դիրքով է բացատրվում խալիֆայության քաղաքականության կտրուկ փոփոխությունը IX դարի երկրորդ կեսին հայ նախարարների և հատկապես Բագրատունիների հանդեպ[13]։

* * *

Պատմագիր Ղազար Փարպեցին բացահայտել է Սասանյանների, իսկ Սեբեոսը՝ Բյուզանդական կայսրության՝ Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության էությունը։

Փարպեցին գրում է, թե Հայաստանի թագավորության վերացման նախօրյակին պարսից Հալկերտ I-ը խորհել էր, որ Հայոց աշխարհը մեծ է և հարուստ, սահմանակից հունաց իշխանությանը, որի տիրապետությանը ենթակա են հայերից շատերը, և գուցե իրեն ենթակա հայերը միանան նրանց հետ, գնան ենթարկվեն հունաց կայսերը և ապստամբեն իր դեմ։ Հայերը պարսից օրենքներին օտար են ու ատող, ունեն նույն դավանանքն ու օրենքները, ինչ հույները։ Եթե ինքը Սասանյաններից թագավոր նշանակի Հայաստանում, ապա նման կասկածներից անհոգ կլինի, այն ժամանակ հայերը միշտ երկյուղով կծառայեն իրենց։ Սովորություն կդարձնեն ընդունել պարսից օրենքները, որսի և խաղերի ժամանակ մշտապես խոսելով միմյանց հետ սիրալիր բարեկամություն կստեղծվի, բացի այդ, փոխադարձ ամուսնություններով էլ հաղորդակից կլինեն միմյանց հետ։ Դրանից հետո հայերը կհեռանան հույներից[14]։

Հաղարապետ Միհրներսեհն էլ, հիմնականում առաջադրելով Հաղկերտի ծրագիրը, շեշտել է, որ եթե հայերին պարսիկների օրենքներին ընտելացնեն, ապա նրանք կհեռանան կայսրից և, որ կարևոր է, այդ դեպքում վրացիներն ու աղվաններն էլ իրենց կողմը կանցնեն։ Նա արքային խորհուրդ է տվել ուրացողներին մեծամեծ պարգևների արժանացնել ու փառավորել ավելի, քան հայոց

---

12 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթություններ Ստ. Մալխասյանցի. Երևան, 1940, էջ 199։

13 Տե՛ս Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, էջ 569—570։

14 Տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Թիֆլիս, 1907, էջ 37—38։

մյուս նախարարներին։ Դրանով նրանց մեջ նախանձ կգրգռվի, երբ տեսնեն, թե ինչպիսի կյանք ու բարիքներ են վայելում նրանք, դրանից հետո նրանք հոժարակամ հանձն կառնեն կատարելու կրոնափոխ լինելու մասին նրա հրամանը և կշտապեն նրա կամքով շարժվել։ Հազարապետի կարծիքով, եթե այդպես չլինի, ապա նա վստահ չէ, կասկածում է, թե մի օր հայ նախարարները կարող են գնալ ենթարկվել հույներին, իսկ դա մեծ վնաս կլինի պարսից թագավորությանը[15]։

Պարսից արքունիքի այդ քաղաքականությունն իր որոշ դրական արդյունքներն է տվել հատկապես այն բանից հետո, երբ կայսրությունը 363 թ. «ամոթալի» պայմանագրով լքել էր իր դաշնակից Հայաստանին՝ հրաժարվելով որևէ օգնություն ցույց տալ նրան։

Եթե մինչ այդ Հայաստանում գերիշխող էր հռոմեական կողմնորոշումը՝ Մամիկոնյանների ու Լուսավորչի տոհմի ներկայացուցիչների գլխավորությամբ, ապա 363 թ. հետո խիստ զորեղանում է պարսկական կողմնորոշումը Սյունիքի նախարարների և մասամբ Արծրունիների տոհմի առանձին ներկայացուցիչների գլխավորությամբ։ Այն հետագայում ավելի է խորանում Բյուզանդական կայսրության ձուլարարական քաղաքականության և Հուստինիանոս կայսեր իրականացրած վերափոխումների պատճառով։ «Թե որքան զորեղ է եղել այս շարժումը,— գրում է Հ. Մանանդյանը,— այդ երևում է նրանից, որ պարսկական կուսակցությանն էր հարել մինչև իսկ Վահան Մամիկոնյանը, Վասակ սպարապետի եղբայրը»[16]։

Քաղաքական այդ կողմնորոշումների միջև պայքարում պարսկականը հաղթանակող է դուրս գալիս։ Հայ Արշակունիների դեմ նրա կուսակիցների դավաճանական գործունեությունը փաստորեն պարարտ հող էր ստեղծում Հայաստանի նկատմամբ պարսկական արքունիքի ծրագրերի իրականացման համար։ Այս առումով, ինչպես մեզ թվում է, սխալվում են այն պատմաբանները, որոնք փորձում են արդարացնել հայերի նկատմամբ պարսկական արքունիքի վարած քաղաքականությունը և պարսկական կողմնորոշման կուսակիցների գործունեությունը (Ն. Ադոնց, Հրանտ Արմեն, Մ. Հասրաթյան)։

V դարում Հայաստանի՝ պարսկական տիրապետության տակ գտնվող տարածքում հայ նախարարների ներքին ինքնավարության պահպանումը և հայ մշակույթի ծաղկումը նրանք պարսկական արքունիքի վարած իբր «բարեհաճ» քաղաքականության արդյունք են համարում։ Սակայն հայկական թագավորության անկումից հետո պարսիկ տիրակալները հարկադրված էին որոշ ժամանակ հանդուրժող լինել հայերի նկատմամբ։ Պարսկաստանի կողմից Հայաստանը նվաճելու դեմ և հետագայում նոա դաժան լուծը թոթափելու համար հայ ժողովրդի ծավալած ազատագրական հերոսական մաքառումներն էին ստիպել նրանց այդպես վարվելու։ Հայկական պետականության անկումից հետո էլ հայերի դիմադրողական կարողությունը դեռ բավական մեծ էր, պարսկա-բյուզանդական հակամարտությունների պայմաններում պարսկական արքունիքը ստիպված էր դա հաշվի առնել և այդ ուժը օգտագործել իր դարավոր թշնամու՝ կայսրության դեմ։ Միաժամանակ Հայաստանում իր տիրապետությունը ապահովելու նպատակով նա այլազան մեքենայություններով ներքուստ քայքայում էր հայերի միասնությունը, ջլատում նրանց ուժերը։ Վերոհիշյալ պատմաբանները անտեսում են այն կարևոր հանգամանքը, որ ինչպես քրիստոնեությունը պետական կրոն դարձնելը, այնպես էլ գրի ու գրականության ստեղծումը և մշակույթի ծաղկումը թելադրված էին հենց հոգևոր ղենք ստեղծելու անհետաձգելի պահանջով, որպեսզի հայերը կարողանան դիմակայել Պարսկաստանի

---

15 Նույն տեղում, էջ 87—89։

16 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր. հ. Բ, էջ 187։

ձուլարարական քաղաքականությանը, պահպանեն իրենց ինքնությունն ու ներքին ինքնավարությունը։

* * *

Պատմագիր Սեբեոսն էլ քաջ գիտակցել է հայ պետականության անկումից հետո Բյուզանդական կայսրության և սասանյան Պարսկաստանի հակամարտությունների պայմաններում Հայաստանի համար ստեղծված ծանր ու անելանելի վիճակն ու նրա դերը այդ հակամարտություններում։ Նա միանգամայն ճիշտ բացահայտել է Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ այդ պետությունների վարած քաղաքականության «նենգավոր խորհուրդն» ու վերջնական նպատակները։ Գրում է, թե հունաց Մորիկ կայսրը (582—602 թթ.) Հայաստանի իշխանների ու նրանց զորքերի մասին ամբաստանական նամակ է գրել պարսից Խոսրով II արքային, ասելով. «Ագգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանդչել ոչ լինի»[17]։ Երկու-երեք նախադասությամբ նա չափազանց դիպուկ բնութագրել է պարսիկներին ու բյուզանդացիներին։ Առաջինների մասին այդ արել է Մորիկ կայսեր պալատականների միջոցով։ Պարսից Խոսրով II արքան իր ներքին թշնամիների դեմ կռվելու համար դինական օգնություն է խնդրում կայսրից, որը դիմում է իր պալատականներին իմանալու համար նրանց կարծիքը. վերջիններս պատասխանում են, որ պետք չէ ընդառաջել պարսիկներին ու կատարել խնդրանքը, որովհետև պարսիկները անօրեն ազգ են և բոլորովին ստախոս՝ իրենց նեղն ընկած ժամանակ խոստումներ են տալիս, իսկ երբ խաղաղություն են ձեռք բերում, չեն կատարում իսոստումը, ասում են, թող իրար սպառեն և մենք հանգիստ կլինենք[18]։

363 թ. «ամոթալի» պայմանագիրը և Մորիկ կայսեր՝ Սեբեոսի բերած նամակը ցույց են տալիս, որ նույն քաղաքականությունը հայերի նկատմամբ, թերևս ավելի ինտենսիվ, վարել են նաև բյուզանդացիները և նրանք էլ քիչ չեն խաբել հայերին ու ահավոր չարիքներ պատճառել։ Բյուզանդացիները փաստորեն իրականացրել են Հռոմեական կայսրությունից ժառանգած «բաժանիր, որ տիրես» հանրահայտ սկզբունքը։ Փարպեցին ասում է, որ ավստամբության նախօրյակին Վահան Մամիկոնյանը նախարարներին զգուշացրել է՝ հույս չդնել բյուզանդացիների վրա, քանի որ նրանք թուլ ու խաբեբա են, Վարդանի ժամանակ նրանք «...հարանց մեջոց ուխտեցին երդմամբ, և ստեղին»[19]։

Քաղաքական կողմնորոշման հարցի վրա տեղի ունեցած պայքարը քիչ դառնություններ ու ավերածություններ չի պատճառել Հայաստանին ու հայ ժողովրդին, այն նպաստել ու խթանել է կենտրոնախույս ուժերի ակտիվացմանը և բացահայտ դրսևորմանը։ Այդ դրսևորումները հովանավորվել ու հաճախ հրահրվել են կայսրության ու Սասանյանների կողմից, որոնք և այդ ուժերը օգտագործել են Հայաստանում իրենց ծրագրերը և նպատակները իրականացնելու համար։ Այսպես, Սասանյանները իրենց ձուլարարական քաղաքականությունը կենսագործել են զորոաստրեությունն ուրացած, զրադաշտական կրոնն ընդունած դավաճանների ակտիվ ու գործարար աջակցությամբ, որոնք կռվել են ոչ միայն Արշակունիների ու կայսրությանը հարած նախարարների, այլև հայ եկեղեցու և կրոնի դեմ։

Այդ ժամանակաշրջանի մասին Պատմահայրը դառնությամբ գրել է, որ իրենց տիրել են խստասիրտ ու չար թագավորներ (նկատի ունի պարսից ար-

---

17 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 86։

18 Նույն տեղում, էջ 76։

19 Ղազար Փարպեցի, էջ 262։

քային և կայսրին—Լ. Բ.), որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս։ Կառավարիչները կարգ չեն պաշտպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար։ Ասպատակություններ են դալիս անհատնում, շատ տեղերի վրա, ստացվածքները հափշտակվում են, գլխավոր սարդիկ կապվում են, հալտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում աղնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սով և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ։ Աստվածապաշտությունը մոռացված է[20]։

Փարպեցին էլ Վահանի բերանով Միհրան զորավարին տալիս է դավաճանների ու ուրացողների բնութագիրը։ Նա գրում է, որ Հայոց աշխարհը մեծ ու պիտանի երկիր է, բայց թող նա ցույց տա իրենն մի մարդ այդ երկրում, որ թագավորի շնորհիվ է զորացել, արժանավոր կերպով հասնելով իշխանության. ընդհակառակը, հիմա զորանում են ավազակ, անպիտան, հացկատակ ու ստոր սարդիկ, որոնք պարսից մեծ թագավորությանը խաբում են, ուրանում իրենց կրոնը, փառքի ու իշխանության արժանանում, որից հետո գաղտնի միզում են կրակի վրա[21]։

Դրությունը, սակայն, արմատապես փոխվում է Վահան Մամիկոնյանի գլխավորած 484 թ. ապստամբության հաղթանակից հետո։ Պարսից զորավար Նիխորի հետ Վահանի ունեցած ամբողջ խոսակցության մեջ Փարպեցին արտացոլել է ազգային կողմնորոշման կուսակիցների բացահայտ պայքարն այդ ժամանակ Հայաստանում գերիշխող դիրք գրավող պարսկական խմբակցության դեմ։ Ավելին, Վահանը բացարձակ մարտահրավեր է նետում այդ խմբակցությանը։ Նա Նիխորին ասում է՝ փոռձեցեք հրաման տալ հայ այն իշխաններին, որոնց Պերոզը Հայաստանում իշխան է կարգել և այժմ իշխանություն և պատիվ ունեն, որ հավաքեն իրենց այրուձին և առանց պարսիկների օգնության կռվեն իմ մարդկանց հետ, պայմանով՝ ով հաղթի, նրան էլ հանձնեն երկրի կառավարումը, շարունակելով ծառայել պարսիկներին[22]։

Պատմագիրը պարսկական կողմնորոշման կուսակիցների դեմ հաղթանակի արդյունքներն ավելի շեշտակի ընդգծելու նպատակով Հովհան Կաթողիկոսի բերանով ասում է. «Ո՞ւր են առանց աստծու զորացածները, ո՞ւր են առանց աստծու իշխանություն ձեռք բերողները, ո՞ւր են եկեղեցին անարգողները, օրենքները ոտքի տակ տվողները, սրբությունը պղծողները, մոխրատներ շինողները, ճշմարտությունը մոռացողները, արդարությունը հայհոյողները—փախան, գլուխները կախեցին, ամաչեցին»[23]։

* * *

Քաղաքական կողմնորոշումը, առանձին դեպքերում, մեր մի քանի պատմագիրների հարկադրել է մեղանչել պատմության առաջ։ Այսպես, Ագաթանգեղոսը գրում է, թե Տրդատ III-ի համար «Յունաց աշխարհը» մի դրախտավայր է, իբր Տրդատն ասել է, թե երբ իրենք հունաց երկրում են եղել, այնտեղ տեսել են թագավորների հոգատարությունը երկրի շենության ու բարեկեցության համար, հոծ բազմության խաղաղ բարեկեցությունը և նրանց այդ աշխատանքը փոխհատուցվում էր խաղաղությամբ, ամենայն բարիքով փառավորվելով՝ նրանք բարիքներ էին վայելում[24]։

---

20 Խորենացի (աշխարհաբար), էջ 252։

21 Ղազար Փարպեցի, էջ 301։

22 Նույն տեղում, էջ 371։

23 Նույն տեղում, էջ 398։

24 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1914, էջ 73—74։

Սակայն իրապես, իհարկե, այդպես չի եղել, կայսրությունն այդ ժամանակաշրջանում ներքին ճգնաժամ է ապրել, անընդհատ պատերազմներ է մղել ներքին ու արտաքին թշնամիների դեմ, ուստի շենության ու բարիքներ վայելելու մասին խոսք չէր կարող լինել։ Ո՞րն էր Հունաց աշխարհը այդպես ներկայացնելու պատճառը։ Զմոռանանք, որ Ագաթանգեղոսը իր երկը գրել է V դարի վերջին, երբ Հայաստանում բավական ակտիվացել էր պարսկական կողմնորոշումը։ Անհրաժեշտ էր ցույց տալ կայսրության առավելությունները Պարսկաստանի համեմատությամբ, ընդգծել, որ այնտեղ խաղաղություն է տիրում և կայսրությունը կարող է զորավիգ լինել հայությանը Սասանյանների դեմ նրա պայքարում։ Ահա այդ նպատակն է հետապնդել պատմագիրը։

Փավստոս Բուզանդի վկայությամբ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը, որը IV դարի 60—70-ական թթ. արևմտյան կողմնորոշման պարագլուխն է եղել, այլևս վստահություն չունենալով Արշակունյաց թագավորության կենսունակության հանդեպ, Հայաստանը պարսկական տիրապետության վտանգից փրկելու համար նպատակահարմար է համարել նրա պաշտպանությունը ապահովել Բյուզանդական կայսրության միջոցներով ու օգնությամբ՝ դարձնելով Հայաստանը ասորդյաց և անձատչելի մի պատվո կայսրության թիկունքում[25]։ Ըստ Փավստոսի Մուշեղը խորհրդակցել է կայսրության իշխանների և նրանց միջոցով կայսեր հետ, աշխատել է համոզել, որ հարկավոր է Հայոց աշխարհում մշտական կայազորների համար ամուր պարիսպներով քաղաքներ շինել ամեն մի գաւառում, մինչև Գանձակ սահմանագլուխը, Հայոց բոլոր ազնվականներին դինկորագրել և զինել ու պահել կայսրության հաշվին, նրա հաշվին պահել նաև Հայոց աշխարհի զորքերը և ամեն զգուշություն ձեռք առնել իրենց թշնամիների՝ պարսից զորքերի դեմ[26]։ Պատմագիրն այնուհետև ասում է, թե կայսրն իբր մեծ ուրախությամբ հանձն է առել իրականացնել Մուշեղի այդ ծրագիրը, որպեսզի Հայոց աշխարհը հաստատ ու ամուր կապվի իր հետ, և պարսից թագավորը չըկարողանա Հայաստանը գրավել[27]։ Մուշեղի մահից հետո, սակայն, այդ ծրագիրը չի իրականացվել, և Հայաստանը թողնվել է բախտի քմահաճույքին։ Օգտվելով դրանից, Պարսկաստանը նորից իր տիրապետությունն է հաստատել Հայաստանի մեծագույն մասում։

Այդ նույն ժամանակաշրջանում պարսկական կողմնորոշման պարագլուխներ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը իրենց դավաճանական եռանդուն գործունեությունն են ծավալել Հայաստանում, առաջնորդել են պարսկական որոգայթները, ավերել երկրի շատ գավառներ, մարդկային անհաշիվ զոհեր պատճառել ու գերեվարել բնակչության մի մասը։ Փավստոսը հաղորդում է, որ ամենուրեք քանդել են եկեղեցիները, հիմնել ատրուշաններ ու ստիպել բնակչությանը ընդունել զրադաշտական կրոնը[28]։ Խորենացին էլ գրել է, թե Մերուժանը «ինչ գիրք որ գտնում էր, այրում էր և հրամայում էր հունարեն գրագիտություն չսովորել, այլ պարսկերեն և ոչ ոք չհամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել»[29]։ V դարի երկրորդ կեսին պարսկական կողմնորոշման կուսակիցների կողմից ուժեղ հալածանքներ էին սկսվել ազգային ու արևմտյան ուղղություններին հարողների նկատմամբ, այդ թվում և պատմագիրներ ու թարգմանիչներ Խորենացու, Փարպեցու, Խոսրովիկի և ուրիշների[30]։

---

25 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, էջ 230։

26 Բուզանդ, էջ 273։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում, էջ 195—196։

29 Խորենացի, էջ 205։

30 Փարպեցի, էջ 436—437։ Տե՛ս Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն. հ. I, Երևան, 1944, էջ 252—253։ Ստ. Մալխասյանց. Խորենացու ուսումնասիրության շուրջը. Երևան, 1940, էջ 130—144 և Խորենացու Պատմության Ներածության XIII—XXIII էջերը։ Ե. Տեր-Մինասյան. Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը. և նույնի՝ Դարձյալ Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջը (տե՛ս նրա

«Խորենացու ոգին,— միանգամայն ճիշտ նկատում է Աշ. Հովհաննիսյանը,— Հայաստանի խորտակված թագավորությունը վերականգնելու համար արծարծված ֆեոդալական շարժման արտահայտություններից մեկն էր։ Խորենացին սոսկ պատմության դրքի մեջ թաղված գիտուն չէր, այլ շարժման դաղափարախոս, որ պայքարում էր պատմությունն իմաստասիրողի գրչով»։ Այնուհետև նա եզրակացնում է, որ պետք է կարծել, թե «Պատմության իր գրքով Խորենացին արտահայտել է ոչ միայն իր, այլև իր մեկենասի՝ մարզպան Սահակ Բագրատունու և նրա ետև կանգնած հայ ֆեոդալական խմբակցության տրամադրությունը»[31]։

Ուշագրավ է Եղիշեի այն հարցադրումը, որ դիմադրել, պայքարել պետք է այն դեպքում, երբ վտանգվում է ժողովրդի հայրենի դավանանքը[32]։ Եվ քանի որ դավանանքը իմաստավորել է և՛ ժողովուրդ, և՛ հայրենիք հասկացություններ, հետևապես և այն ժամանակ պետք է պայքարել, երբ վտանգվում էին նաև այդ իմաստները։ Փավստոսի և Փարպեցու վկայությամբ նրանց գլխավոր գործող անձինք՝ Մանվել և Վահան Մամիկոնյանները, իրենց հեռատես քաղաքականությամբ կարողացել էին ժամանակավորապես հեռացնել այդ վտանգները և 7 տարի խաղաղ կառավարել երկիրը՝ պահպանելով չեղոքություն, չապավինելով ոչ մեկի օգնությանը։ Վահանը պարսից զորավար Նիխորին ներկայացրել է ապստամբների պահանջները։ Այնտեղ կարդում ենք. առաջին կարևոր և անհրաժեշտ պահանջը՝ իրենց սեփական օրենքներին ձեռք չտալ, ոչ մի հայ մարդու կրոնափոխ չանել, ոչ մեկին ուրացության համար իշխանություն ու պատիվ չտալ։ Հայոց երկրից կրակարանները հանել, թույլ չտալ աղտեղի ու անպիտան մարդկանց կողմից եկեղեցու անարգելը, թույլ տալ համարձակ ու անարգելի պաշտել քրիստոնեության կարգն ու պաշտոնը, ուր և կամենան։

Երկրորդ պահանջը՝ մարզուն իշխանությամբ ու դիրքով չճանաչել, այլ արդարությամբ լավն ու վատթարը հասկանալ, պիտանին ու անպիտանը որոշել. պատվական, քաջ ու օգտակար մարդուն լավերի կարգում ընդունել, վատին ու անպիտանին արհամարհել, իմաստուններին մոտ պահել ու խորհրդակից դարձնել և հիմարներին հեռացնել ու հալածել։ Վահանը միաժամանակ ընդգծել է, թե երբ այդպես լինի, ապա Արեաց աշխարհի բոլոր գործերը հաջող և անսխալ կլինեն, իսկ եթե հակառակը անեն, ինչպես մինչ այդ են արել, նրանց գործերը դիմադրության կհանդիպեն ու կձախողվեն[33]։

Մամիկոնյան տոհմի այս երկու ներկայացուցիչներն են, որ խախտել են իրենց տոհմի քաղաքական կողմնորոշման ավանդական քաղաքականությունը, ակնկալություններ չեն ունեցել Բյուզանդական կայսրությունից։ Իրրև հաղթողներ թելադրել են իրենց պահանջները պարտված սյուղերենին՝ պարսից թագավորին ու ժամանակավորապես հեռացնելով դավանանքին, հետևապես և ժողովրդին ու հայրենիքին սպառնացող վտանգը, կարողացել են ապահովել երկրի խաղաղությունն ու ինքնուրույնությունը։ Հետագայում, հաշվի առնելով ուժերի փոխհարաբերությունը և ստեղծված նոր իրավիճակը, նույնպիսի հեռատես քաղաքականություն է վարել Թեոդորոս Ռշտունին և որոշ ժամանակաբնթացքում ապահովել երկրի խաղաղությունն ու ինքնավարությունը։

Եղիշեն գիտակցել է, որ ստեղծված իրավիճակում, երբ երկրում ուժերը ջլատվել էին, առկա էին քաղաքական կողմնորոշման երեք հակադիր ուղղու-

---

Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 209—280)։ Տե՛ս Լ. Բաբայան. Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության. Երևան, 1977, էջ 290—296։

31 Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք առաջին, Երևան, 1957, էջ 100—101։

32 Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան. Երեւան, 1958, էջ 27։

33 Տե՛ս Փարպեցի, էջ 356։

թյուններ և երբ դրսից օգնության հույս չունեին՝ տրամաբանական չէր լինի անկախության նպատակ հետապնդել։ Եղիշեն Մանվել Մամիկոնյանի ծրագրի կողմնակցի դերում է հանդես եկել, այն է՝ ստեղծված պայմաններում հայերը արկադրված պետք է լինեին ընդունել Պարսկաստանի գերիշխանությունը, հարկ վճարեին նրան, միայն թե չվտանգվեր դավանանքը և ազգային ինքնավարությունը։ Պատմագիրը խորհում է, որ դավանանքի համար պայքարը իրականում քողարկում է հայ ժողովրդի քաղաքական հիմնական նպատակը՝ պահպանել ժողովրդի ինքնությունն ու երկրի ինքնավարությունը։

Որ իսկապես դավանական պայքարը հայերի համար շղարշ է եղել քողարկելու։ իրենց քաղաքական հիմնական նպատակները, բացահայտ երևում է Վահան Մամիկոնյանի՝ պարսից արքունիքի հետ կնքված պայմանագրից, որտեղ, ինչպես տեսանք, առաջին կարևոր ու անհրաժեշտ պահանջը ոչ թե կրոնափոխությանն է վերաբերում, այլ հայրենի սեփական օրենքներին ձեռք չտալուն, այլ խոսքով՝ նախարարական կարգը, նախարարների ավանդական արտոնությունները, ինքնավարությունը անձեռնմխելի թողնելուն։ Ի ամրապնդումն դրա պահանջվում է ոչ մի հայ մարդու կրոնափոխ չանել, ոչ մեկին ուրացության համար իշխանություն ու պատիվ չտալ (մի հանգամանք, որ բայքայում էր նախարարական կարգը, նրանց արտոնյալ վիճակը)։

Միանգամայն ճիշտ է Հ. Մանանդյանը, որ Հայաստանի անկախության և Արշակունյաց թագավորության վերականգնման ու զորեղացման տեսակետից Մուշեղ Մամիկոնյանի և հռոմեական ուղղության (Հ. Մանանդյանը կուսակցություն բառն է գործածում—Լ. Բ.) քաղաքական կողմնորոշումը նույնքան անբարենպաստ ու սոսանգավոր է եղել, ինչպես Մեռուժանի և պարսկական ուղղության կողմնորոշումը։ Այդ երկու կողմնորոշումները, գոհարերելով Հայաստանի պետական ինքնակայությունը, տրամադիր են եղել երկիրը հանձնել հարևան հզոր պետություններին։ Հ. Մանանդյանը այնուհետև նշում է, թե, իհարկե, իրենք Արշակունիները՝ Պապը և Վարազդատը, որոնք ունեին մտերիմ կոմունիկացիաներ ու խորհրդատուներ (կասկինք ազգային ուղղության կուսակիցները—Լ. Բ.), չէին կարող հանդուրժել իրենց թագավորական իշխանության նվազեցումը կամ ոչնչացումը և ձգտելու էին վերականգնել Արշակունյաց թագավորության հին վարկը և փայլը։ Հայոց թագավորության պահպանման և ուժեղացման այս քաղաքականությունը, անշուշտ, ավելի էր համապատասխանում հայոց երկրի իրական շահերին, քան Մուշեղ Մամիկոնյանի քաղաքական վերոհիշյալ ընթացքը[34]։

Ազգային կողմնորոշման քաղաքականության կողմնակիցները հասկացրել են Վարազդատ թագավորին, որ Մուշեղի ծրագրի իրականացմամբ, փաստորեն, Հայաստանը կդառնա Հռոմեական կայսրության անբակտելի մաս։ Պապ թագավորը, որ հաշվի էր առել 363 թ. պայմանագրից հետո ստեղծված նոր իրավիճակն արտաքին աշխարհում և փորձել կայսրության կամակատարը չլինել, նենգորեն սպանվել էր Վաղես կայսրի հրամանով։

Տալով Մուշեղ Մամիկոնյանի ծրագիրը, Փավստոսը միաժամանակ տալիս է նաև նրա հաջորդի՝ Մանվել Մամիկոնյանի ծրագիրը։ Ի դեպ նկատենք, որ քաղաքական կողմնորոշման հարցում Բուզանդը ավելի հակված է եղել Մանվելի ինքնուրույն քաղաքականության կողմը, և ոչ Մուշեղի։ Վերջինիս ծրագիրը անիրականացված է ներկայացնում, մինչդեռ Մանվելինը՝ ամբողջ յոթ տարի տալիս է իր դրական արդյունքները։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Փավստոսը, լինելով արևմտյան կողմնորոշումը գլխավորող Մամիկոնյանների և Լուսավորչի տոհմի պատմիչը, քաղաքական կողմնորոշման հարցում ինքնուրույնություն է հանդես բերել, փաստորեն կողմնակից է եղել ազգային կողմնորոշման քաղաքականությանը։ Կայսրությունը Արևելքում հեղինակազրկվել էր, երկրում գերիշխող էր պարսկական կողմնորոշումը, Մանվելը ստիպված

---

34 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, էջ 232—233։

էր հաշվի առնել նոր իրավիճակը և նրա՝ դեպի Պարսկաստան հարելը թելադրված էր այդ հանգամանքով։

Թերևս ճիշտ է Հ. Մանանդյանը, որ գտնում է, թե 226—387 թթ. հայ Արշակունիների քաղաքականությունը սասանյան Պարսկաստանի հանդեպ բավականաչափ ճկուն ու հեռատես չէր, սակայն պետք է նկատի ունենալ, որ նրանց հակապարսկական կողմնորոշման շնորհիվ էր, որ Հայաստանը կարողացավ պահպանել իր կուլտուրական ինքնուրույնությունը[35], Միաժամանակ նա նկատում է, որ «Արևելյան Հռոմեական կայսրության հետ քաղաքական և մշակութային մերձեցման քաղաքականությունը, որ վարում էին Արշակունիները և նրանց սերտ դաշինքը Հռոմեացիների հետ ընդդեմ հզոր սասանյան Պարսկաստանի՝ կործանարար եղան Հայաստանի համար»[36]։

Հայաստանին տիրելու համար Պարսկաստանի և Հռոմի միջև ծավալված դարեր տևող պայքարի հետևանքը եղել է այն, որ Արշակունյաց թագավորությունը 385 թ. նախ բաժանվել է նրանց միջև, մեծ մասին տիրել է Պարսկաստանը, փոքր մասին՝ կայսրությունը, ընդ որում 391 թ. վերջինս իր մասում վերացրել է հայկական թագավորությունն ու անկախությունը, իսկ 428 թ. այդ նույնը արել է և Պարսկաստանը։

Եթե 451—484 թթ. սասանյան Պարսկաստանի կրրառած դաժանություններն, տնտեսական ու կրոնական հալածանքների խիստ ուժեղացման հետևանքով Հայաստանում ուժեղացել էր բյուզանդական կողմնորոշումը, ապա VI դարում Հուստինիանոս կայսրի անցկացրած վերափոխումներից հետո (որով վերջնականապես վերացվել է հայ ավատական-նախարարական կարգը, նախարարական ժառանգական իրավունքը, զգալի չափով խախտվել էր մշակութային ինքնուրույն զարգացումը) կայսրության ձուլարարական քաղաքականության ուժեղացումը ստիպել է հայ նախարարներին, ելնելով ստեղծված կոնկրետ իրավիճակից, հակառակ կուրս վերցնել, այս անգամ սերտ կերպով մերձենալ սասանյան Պարսկաստանին, որի տիրապետության տակ գտնվող մասում նախարարական կարգը մնացել էր գրեթե անձեռնմխելի։ Պատահական չէր նաև, որ հենց Հուստինիանոսի վերափոխումներից հետո էր, որ Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը (554/5) վճռական քայլի էր դիմել հայկական եկեղեցին բյուզանդականից անջոկելու ուղղությամբ։

ОТРАЖЕНИЕ ПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ V—VII вв.

Доктор ист. наук Л. О. БАБАЯН

(Резюме)

В статье в общих чертах показана решающая роль политической ориентации светских и духовных феодалов Армении в разных сферах жизни страны, военно-политические предпосылки, предопределившие появление и деятельность трех течений—независимого (национального), провосточного и прозападного, а также их отражение в историографии. Материалы первоисточников раскрывают агрессивную политику Ирана и Византии по отношению к Армении, которая и определяла усиление позиции того или иного течения во внутриполитической борьбе. Приводятся свидетельства летописцев об управлении страной Манвелом и Вааном Мамиконянами. Разобрана положительная оценка их деятельности в историографии.

---

35 Հ. Մանանդյան. Երկեր. հ. Բ, էջ 76։

36 Նույն տեղում, էջ 444։